ԱՄՍՏԵՑԿՅԱՆ ԳԵՂԵՑԿԱՑՈՒՄ
Է ՄԱՐԴՈՒ ՀՈԳԻՆ

E-GIRQ.COM

Հովվուհին և ծխնելույզ մաքրողը

Երբևիցե տեսե՞լ ես դու հի՜ն, շատ հին պահարան, ժամանակի ընթացքում սևացած, բայց ամբողջապես զարդարված զանազան ոլորանների, ծաղիկների ու տերևների փորագրություններով: Սենյակում դրված էր ահա հենց այդպիսի մի պահարան, որ ապուպապերից ժառանգություն էր մնացել տերերին: Պահարանն ամբողջապես ծածկված էր վարդերի, լալաների քանդակներով: Այդ քանդակների միջից դուրս էին ցցվում փոքրիկ եղջերուների գլուխներ, իսկ առավել աչքի ընկնող տեղում վարպետը քանդակել էր մի մարդուկի կերպարանք: Անհնարին էր այդ մարդուկին նայել առանց ծիծաղելու, և հենց նա ինքն էլ ծիծաղելի ձևով ցցել էր իր ատամները. բայց այդ ծամածռությունը ոչ մի դեպքում չէր կարելի ժպիտ համարել: Նա այծի ոտքեր ուներ, ճակատին մանրիկ եղջյուրներ էին ցցվել, երկար մորուքը կախվել էր կրծքին: Երեխաները նրա անունը դրել էին «Օբերունտեր-գեներալ-ադմիրալ-սերժանտ Այծոտն», թեև այդպիսի անունն արտասանելն անգամ դժվար է, և շատերը չէ, որ կարժանանան նման տիտղոսի: Սակայն այդպիսի պատկեր փորագրելն էլ քիչ աշխատանք չէր պահանջել: Բայց և այնպես՝ փորագրել էին. նա կանգնել էր պահարանի վրա և անվերջ նայում էր հայելու տակ դրված փոքրիկ սեղանին, որովհետև այնտեղ կանգնած էր սքանչելի հախճապակե հովվուհին՝ ոսկեգույն ծամերով ու գլխարկով: Այդ հովվուհու շքեղ շրջազգեստը կողքից թեթևակի վեր էր քաշած և ամրացրած ալ վարդով, իսկ ձեռքին նա բռնել էր հովվական գավազանը: Նա սքանչելի էր: Կողքին կանգնած էր մի ծխնելույզ մաքրող, որ սև էր ածուխի պես, բայց նույնպես՝ հախճապա-

կուց: Նա մաքուր էր ու սիրուն, ամենևին էլ վատ չէր ամեն մի այլ հախճապակե արձանիկից: Միայն թե՝ ծխնելույզ մաքրողի նման էր շինված, թեև վարպետը միևնույն հաջողությամբ կարող էր նրան արքայազնի տեսք տալ. միևնույն չէ՞ր՝ ծխնելույզ մաքրող լիներ թե արքայազն:

Ծխնելույզ մաքրողը կանգնել էր գեղեցիկ դիրքով, սանդուղքը ձեռքին բռնած: Նրա դեմքն սպիտակ էր, այտերը՝ աղջկա երեսի պես վարդագույն, բայց դա, թերևս, սխալ էր. չէր խանգարի մի փոքր աղտոտել: Նա կանգնած էր հովվուհու կողքին, որովհետև այդպես էին կանգնեցրել նրանց և, քանի որ կողք կողքի էին՝ այդ պատճառով էլ նշանվեցին իրար հետ: Չէ՞ որ շատ էին հարմար իրար. երկուսն էլ՝ երիտասարդ, երկուսն էլ՝ մարմարե հախճապակուց շինված, և երկուսն էլ՝ միանման փխրուն: Այդտեղ, նրանց կողքին կանգնած էր մի ուրիշ տիկնիկ ևս, բայց նա երեք անգամ մեծ էր սրանցից: Դա մի ծեր չինացի էր, որ կարողանում էր գլուխը տմբտմբացնել: Նա ևս հախճապակուց էր և իրեն համարում էր փոքրիկ հովվուհու պապը ու, թեև չէր կարող դա ապացուցել՝ այնուամենայնիվ պնդում էր, որ ինքը հովվուհու վրա իշխանություն ունի. այդ պատճառով էլ գլխով էր անում օբեր-ունտեր-գեներալ-ադմիրալ-սերժանտ Այծոտնին, որը ուզում էր հովվուհուն:

– Ա՜յ թե ամուսին ես ունենալու,– ասաց մի անգամ ծեր չինացին հովվուհուն:– Ինչպես երևում է, նա շինված է կարմիր փայտից: Կամուսնանաս նրա հետ, և քեզ կկոչեն օբեր-ունտեր-գեներալ-ադմիրալ-սերժանտուհի: Նա մի ամբողջ պահարան արծաթ ունի՝ արկղներում պահածները չհաշված:

– Ես չեմ ուզում նրա մութ պահարանի մեջ մտնել,– ասաց փոքրիկ հովվուհին:– Ասում են՝ այնտեղ տասնմեկ հատ հախճապակե կին ունի:

– Դե՛, դու էլ կլինես տասներկուերորդը,– պատասխանեց չինացին:– Այս գիշեր, հենց որ հին պահարանի մեջ ճրթոց լսվի՝ դուք կպսակվեք. դա այնքան ճշմարիտ է, որքան այն, որ ես չինացի եմ,– և, գլուխը տմբտմբացնելով՝ նա քնեց:

Իսկ փոքրիկ հովվուհին լաց եղավ և նայեց իր սիրեցյալին՝ հախճապակե ծխնելույզ մաքրողին, ու ասաց.

– Խնդրում եմ քեզ, եկ փախչենք՝ ուր աչքերս կտրի: Մենք այստեղ մնալ չենք կարող:

– Քո ցանկությունը ի՛մ ցանկությունն է,– պատասխանեց ծխնելույզ մաքրողը:– Գնա՛նք, թեկուզ հենց հիմա: Ես հավատացած եմ, որ իմ արհեստով կարող եմ քեզ կերակրել:

– Ա՜հ, եթե մեզ հաջողվեր շուտ իջնել այս սեղանից,– հառաչեց աղջիկը:– Ես երջանիկ կլինեի միայն այն ժամանակ, երբ մենք միասին դուրս կպրծնեինք այստեղից:

Ծխնելույզ մաքրողը հանգստացնում էր աղջկան, հետո ցույց տվեց, թե որտե՛ղ պետք է դնի ոտքը, սեղանի ոտքի ո՛ր ելուստին կամ ոսկեզօծած նախշին: Նրա ելարանը ևս քիչ ծառայություն չմատուցեց: Եվ ահա, իջան հատակին: Բայց, երբ նայեցին հին պահարանին՝ տեսան, որ այնտեղ սոսկալի իրարանցում է սկսվել:

Փորագրված եղջերուներն ավելի առաջ էին մեկնել իրենց պոզավոր գլուխները և վզները շուռ տվել, իսկ օբեր-ունտեր-գեներալ-ադմիրալ-սերժանտ Այծոտնը վեր-վեր ցատկեց ու ծեր չինացուն կանչեց.

– Փախա՜ն, փախա՜ն:

Փախստականները մի քիչ վախեցան և շտապ խցկվեցին լուսամուտի տակ դրված արկղիկը:

Այդ արկղիկում պահվում էին երեք-չորս կապուկ կիսատ-պռատ խաղաթղթեր և մի պստիկ

տիկնիկային թատրոն, որը մի կերպ տեղավորել էին նեղլիկ արկղիկում: Թատրոնում ներկայացում էր գնում: Բոլոր տիկինները՝ և՛ ագռավի, և՛ խաչի, և՛ ագուռի, և՛ փոսիկի, նստել էին առաջին շարքում և թափահարում էին իրենց ձեռքի վարդակակաչները: Նրանց հետևը կանգնել էին վալետները, որոնք երկուական գլուխ ունեին. մեկը՝ վերևը, մյուսը՝ ներքևը: Պիեսը երկու սիրահարի մասին էր, որոնց ոչ մի կերպ չէր հաջողվում միանալ, և հովվուհին նրանց նայելով լաց եղավ. ներկայացումը նրան հիշեցնում էր իր սեփական վիճակը:

– Ա՜հ, ես չեմ կարող դիմանալ,– ասաց նա:– Գնա՛նք այստեղից:

Բայց, երբ նորից իջան հատակին և նայեցին իրենց սեղանին՝ տեսան, որ ծեր չինացին արթնացել է: Նա ամբողջ մարմնով օրորվում էր այս ու այն կողմ՝ հետևելով իր ներսում գլորվող կապարե գնդիկին:

– Վա՜յ, ծեր չինացին մեր հետևից է ընկել,– գոչեց փոքրիկ հովվուհին և այնպես վախեցավ, որ ընկավ իր բարակ հախճապակե ծնկների վրա:

– Սպասի՛ր, ես մի բան մտածեցի,– ասաց ծխնելույզ մաքրողը:– Տեսնո՞ւմ ես այն անկյունում դրված մեծ սափորը, որի մեջ չորացած բուրավետ խոտ ու ծաղիկներ կան: Մտնենք այդ սափորի մեջ: Այնտեղ մենք վարդերի ու նարդոսների թերթերի վրա կպառկենք և, եթե չինացին մոտենա՝ նրա աչքերը աղ կլցնենք:

– Ո՛չ, դա քիչ կօգնի,– առարկեց աղջիկը:– Բացի այդ՝ ես գիտեմ, որ ծեր չինացին ու սափորը մի ժամանակ նշանված են եղել և, քանի որ նրանք սիրել են իրար՝ այդ զգացմունքը չէր կարող անհետ կորչել: Ո՛չ, մեզ մնում է միայն մեկ բան. դուրս գալ լայն աշխարհը:

– Իսկ դու չե՞ս վախենում ինձ հետ ճանապարհ ընկնել,– հարցրեց ծխնելույզ մաքրողը:– Դու մտածե՞լ ես, թե որքա՜ն մեծ է աշխարհը, և որ մենք այլևս այստեղ չենք վերադառնա:

– Այո՛, ես այդ ամենը մտածել եմ,– պատասխանեց աղջիկը:

Ծխնելույզ մաքրողն աչքերը հառեց աղջկան և ասաց.

– Ես գիտեմ միայն մեկ ճանապարհ, որը ծխնելույզն է: Դու իսկապես քաջություն կունենա՞ս ինձ հետ մտնելու վառարանը և խողովակի միջով վեր մագլցելու: Երբ մենք հասնենք ծխնելույզին՝ ես գիտեմ, թե ի՛նչ պիտի անեմ: Մենք այնքան վեր կբարձրանանք, որ մեր հետևից չեն հասնի: Իսկ ամենավերևը կա մի անցք, որով մենք կարող ենք լույս աշխարհ դուրս գալ:

Եվ նա աղջկան տարավ վառարանի դռան մոտ:

– Ինչքա՜ն սև է այստեղ,– գոչեց աղջիկը, բայց և այնպես՝ տղայի հետևից մտավ վառարան և ապա՝ խողովակի մեջ, որտեղ մութ էր, ինչպես գիշեր:

– Դե՛, ահա մենք արդեն ծխնելույզի մեջ ենք,– ասաց տղան:– Տե՛ս, թե ի՜նչ հրաշալի աստղ է փայլում ուղիղ մեր գլխավերևում:

Երկնքից իսկապես նրանց էր նայում մի աստղ, որ կարծես իրենց ճանապարհ էր ցույց տալիս: Իսկ նրանք շարունակ մագլցում էին վեր ու վեր: Բայց ծխնելույզ մաքրողն օգնում էր հովվուհուն. բարձրացնում էր նրան, բռնում և ցույց էր տալիս, թե որտե՛ղ է ավելի հարմար դնել իր հախճապակե ոտքը: Այսպես նրանք հասան ծխնելույզի ծայրը և նստեցին պռնկին, որպեսզի մի քիչ հանգստանան. զարմանալի չէ, քանի որ շատ էին հոգնել այդ դժվար ճանապարհին:

Իրենց գլխավերևում աստղազարդ երկինք էր, իսկ ցածում երևում էին քաղաքի կտուրները: Այդ բարձրությունից նրանց աչքի առաջ հսկայական մի տարածություն էր բացվում: Խեղճ հովվուհին երբևէ չէր կարծել, թե աշխարհն այդքան մեծ է: Նա իր գլուխը հենեց ծխնելույզ մաքրողի ուսին և այնպես լաց եղավ, որ արցունքները սրբեցին տարան նրա գոտու ոսկեգույն փոշին:

– Ո՛չ, այս արդեն չափից դուրս է,– ասաց նա,– ես չե՛մ կարող դիմանալ: Աշխարհը չափազանց մեծ է: Ա՜հ, եթե ես նորից կանգնած լինեի հայելու տակի փոքրիկ սեղանին: Ես չեմ հանգստանա, մինչև որ չվերադառնամ այնտեղ: Ես քո հետևից աշխարհեաշխարհ շրջեցի, այժմ ե՛տ տար ինձ, եթե սիրում ես:

E-GIRQ.COM

Ծխնելույզ մաքրողն սկսեց համոզել աղջկան՝ հիշեցնելով ծեր չինացուն և օբեր-ունտեր-գեներալ-ադմիրալ-սերժանտ Այծոտնին: Բայց հովվուհին այնպե՜ս դառն էր հեկեկում և այնպե՜ս էր համբուրում սիրեցյալին, որ սրան մնում էր միայն զիջել աղջկան, թեպետև դա անմտություն էր:

Մեծ դժվարությամբ նրանք նորից ցած իջան խողովակի միջով և հասան մութ վառարանը: Մոտենալով վառարանի դռանը՝ նախ մի քանի րոպե կանգ առան, որ իմանան, թե ի՞նչ է կատարվում սենյակում: Այնտեղ լռություն էր: Նրանք դուրս նայեցին, և ո՜վ սարսափ. սենյակի մեջտեղն ընկած էր ծեր չինացին: Երևում է՝ երբ նա փորձել էր ընկնել փախստականների հետևից, սեղանից ընկնելով՝ երեք կտոր էր եղել: Մեջքը մի կողմ էր թռել, իսկ գլուխը գլորվել էր անկյունը: Բայց օբեր-ունտեր-գեներալ-ադմիրալ-սերժանտ Այծոտնը առաջվա պես կանգնած էր իր տեղը՝ մտքի մեջ ընկած:

– Ա՜հ, ի՜նչ սարսափելի բան,– գոչեց հովվուհին:– Իմ ծերունի պապիկը կտոր-կտոր է եղել, և մեղավորը մենք ենք: Ա՜հ, ես դրան դիմանալ չեմ կարող:

Եվ նա հուսահատությունից կոտրատում էր իր մանրիկ թաթիկները:

– Նրան կարելի՛ է նորոգել,– ասաց ծխնելույզ մաքրողը:– Շատ հիանալի կարելի է նորոգել: Դու մի՛ հուզվիր: Բավական է՝ մեջքին խեժ քսեն, իսկ կոկորդի մեջ փայտիկ դնեն, և նա կլինի բոլորովին նորի պես ու դարձյալ մեզ ամեն տեսակ անախորժ բաներ կասի:

– Դու կարծո՞ւմ ես,– հարցրեց հովվուհին, և նրանք նորից մագլցելով բարձրացան այն սեղանին, որտեղ առաջ կանգնած էին:

– Այ, տեսնո՞ւմ ես՝ ինչ մեծ ճանապարհորդություն կատարեցինք մենք,– ասաց ծխնելույզ մաքրողը:– Այնինչ՝ կարելի էր բոլորովին տեղից չշարժվել:

– Ա՜հ, միայն թե պապիկին նորոգեին,– հառաչեց հովվուհին:– Թա՞նկ կնստի դա:

Եվ նորոգեցին: Դրան մասնակցեց ամբողջ ընտանիքը. նա դարձավ բոլորովին նորի պես, միայն թե՝ այլևս գլխով տմբտմբացնել չէր կարողանում:

– Դուք ինչ-որ գոռոզացել եք այն օրից, երբ կոտրվեցիք,– ասաց նրան օբեր-ունտեր-գեներալ-ադմիրալ-սերժանտ Այծոտնը:– Բայց ինձ թվում է, թե այստեղ գոռոզանալու ոչինչ չկա: Դե՛, ի՞նչ. այդ աղջկան ինձ կտա՞ք, թե՞ ոչ:

Ծխնելույզ մաքրողն ու հովվուհին աղերսագին նայեցին ծերունի չինացուն՝ վախենալով, թե նա գլխով կանի: Բայց չինացին գլխով անել չէր կարողանում, իսկ ուրիշներին պատմել, որ իր կոկորդի մեջ փայտ են դրել՝ դա էլ հաճելի բան չէր: Ահա այդպես էլ հախճապակե զույգը մնաց կողք կողքի կանգնած: Հովվուհին ու ծխնելույզ մաքրողը օրհնում էին պապիկի կոկորդի ամրիչը և շարունակում էին սիրել իրար, քանի դեռ չէին կոտրվել:

E-GIRQ.COM